

ԵՁՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 67
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված
ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման
աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Քասախ բնակավայրի գլխավոր հատակագծում
առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության
վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման
13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի
համայնքի Քասախ բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
հանդիսացող 07-065-0305-0006 կադաստրային ծածկագրով 0.064 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	հանդիսացող 07-065-0305-0006 կադաստրային ծածկագրով 0.064 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ
օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին
համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն.
քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական
նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով
ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների
սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես
կառուցապատողի միջոցների հաշվին:

